ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/83

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.06.2018թ. թիվ 03/26-3/10921-18 գրությամբ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 11.06.2018թ. թիվ ԴՎԱ/2097 գրության հիման վրա, 15.06.2018թ. «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.06.2018թ. թիվ ԴՎԱ/2097 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ երաժշտական գործիքների գնման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով չորս մասնակից, այդ թվում՝ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 05.06.2018թ. ժամը 14:00-ին հայացած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

«Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից շտկվեցին արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց 4-րդ չափաբաժնի մասով «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տեսակենտրոն» ՍՊԸ-ն 29.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտեր գնահատման արդյունքում 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն: 4-րդ չափաբաժնի մասով «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն ներկայացրել է Տուբա «Բ» MTP BB, որը որակապես, արտադրանքի ապրանքանիշով և հիմնական տեխնիկական բնութագրով / Es լարվածք, 3 պոմպե կափույր, հնչողության ինտոնացիան մաքրություն, համապատասխան կաղապարով փաթեթավորում/ համապատասխանում է տեխնիկական պահանջներին, իսկ մի քանի չափորոշիչներով համարվում է առավել:

Հաշվի առնելով այն փաստը, որ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն շուրջ երեսուն տարի համարվում է հայկական շուկայում երաժշտական գործիքների առաջատար մատակարար, մասնակցել և հաղթել է բազմաթիվ մրցույթներ, հանդիսանում է մի շարք կազմակերպությունների նվիրատու և բարեգործություններ կատարած կազմակերպություն, խնդրում ենք չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Սնխչյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2018թ. թիվ 03/26-3/10921-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.06.2018թ. թիվ ԴՎԱ/2097 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 29.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4, 17.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 7 և 31.05.2018թ. ժամը 14:30-ին կայացած նիստին թիվ 8 արձանագրությունները, «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից 29.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ երաժշտական փողային և հարվածային գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 29.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 4.1-րդ կետով որոշել է ընթացակարգի 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 03.05.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն ծանուցվել է:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով ընթացակարգի 4-րդ չափաբաժնովգնման ենթակա ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

- 4-րդ չափաբաժին՝ Տուբա «Բ»՝ «Amati» AEB-211 կամ համարժեք, լարվածքը Es, 3 պոմպե կափույր, 1 կամ 2 ջրահեռացման կափույր, փողի անցքի շառավիղը 14,2 մմ (,560”), փողալայնուկի շառավիղը 350 մմ (13,8”), երկարությունը 790 մմ (31,1”), չափը 4/4, մեխանիկան չժանգոտվող մետաղից, իրանը դեղին պղինձ, ծածկույթը դեղին պղինձ, կոմպլեկտում արծաթագույն կամ ոսկեգույն փողածայրոցով, հնչողության ինտոնացիոն մաքրությունը պետք է համապատասխանի միջազգային նորմերին (ստուգվում է էլեկտրոնային կամերտոնով), պղնձյա փողային գործիք, փաթեթավորումը համապատասխան կաղապարով, առնվազն 1(մեկ) տարվա երաշխիք՝ մատակարարման օրվանից, գործիքը պետք է ունենա գործարանային անձնագիր, տեղափոխումը մատակարարի ուժերով՝ մատակարարման վայրը ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 54:

Ընկերությունը N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

- 4-րդ չափաբաժին՝ անվանումը՝ Տուբա «Բ», ծագման երկիրը՝ Գերմանիա/Ինդոնեզիա, տեխնիկական բնութագիր՝ 3 պոմպե կափույր, փողի անցքի շառավիղը 16,8 մմ, փողալայնուկի շառավիղը 365 մմ, երկարությունը 840 մմ,

մեխանիկան չժանգոտվող մետաղից, իրանը և ծածկույթը դեղին պղինձ, համապատասխան ֆուտլյարով, փողաձայրոցը առկա է, արծաթագույն հնչողության ինտոնացիոն մաքրությունը համապատասխանում է միջազգային նորմերին:

Հանձնաժողովը 17.05.2018թ. կայացած նիստին թիվ 7 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող 4-րդ չափաբաժնի երաժշտական գործիքի տեխնիկական հատկանիշներում նշված չէ փողի անցքի շառավիղը, փողալայնուկի շառավիղը, երկարությունը չի համապատասխանում ներկայացված տեխնիկական հատկանիշներին, նշված չէ գործիքի չափը, նշված չէ փողաձայրոցի տեսակի առկայության մասին տվյալները, հնչողության ինտոնացիոն մաքրության համապատասխանության հավաստումը, որը հիմնական պահանջներից մեկն է:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել մինչև նիստի կասեցման ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 23.05.2018թ. դիմել է «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/2 ծածկագրով ընթացակարգին «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և պարզվել է, որ դրանում առկա են անհամապատասխանություններ, մասնավերապես.

- 4-րդ չափաբաժնի երաժշտական գործիքի տեխնիկական հատկանիշներում նշված չէ փողի անցքի շառավիղը, փողալայնուկի շառավիղը, երկարությունը չի համապատասխանում ներկայացված տեխնիկական հատկանիշներին, նշված չէ գործիքի չափը, նշված չէ փողաձայրոցի տեսակի առկայության մասին տվյալները, հնչողության ինտոնացիոն մաքրության համապատասխանության հավաստումը, որը հիմնական պահանջներից մեկն է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները, իսկ պահանջվող փաստաթղթերը ուղարկել a.maghaqyan@mil.am էլեկտրոնային հասցեին»:

Հանձնաժողովը 31.05.2018թ. ժամը 14:30-ին կայացած նիստին թիվ 8 արձանագրության 1.1 կետով որոշել է «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրերի հատկանիշները գնահատել Հրավերի պահանջներին ոչ համապատասխան հետևյալ հիմնավորմամբ. «4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող երաժշտական գործիքի տեխնիկական հատկանիշներում «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից նշված չափերը չեն համապատասխանում Հրավերով նախատեսված տեխնիկական հատկանիշներին, ինչպես նաև նշված չէ գործիքի չափը, ինչը ներկայացնելու պահանջը հստակ սահմանված էր անհամապատասխանությունները շտկելու նպատակով մասնակցին ուղարկված ծանուցմամբ:»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 4-րդ չափաբաժնի մասով մերժել «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ գնահատող հանձնաժողովի կողմից գործիքի չափի մասին արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ նշումը անհասկանալի է, քանի որ տեխնիկական բնութագրում նշված «չափը 4/4» հատկանիշից ընդհանրապես պարզ չէ թե ինչի մասին է խոսքը, ավելին, պահանջվող գործիքի համար նախատեսված որևէ ապրանքացանկում (каталог) նման հատկանիշ գոյություն չունի չկա: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ իրենց կողմից ներկայացված ապրանքը որակապես, արտադրանքի ապրանքանիշով և հիմնական տեխնիկական բնութագրով համապատասխանում է Հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական պահանջներին, իսկ մի քանի չափորոշիչներով, որոնք դիտվել են որպես անհամապատասխանություն, անհիմն է, քանի որ դրանք առավել են, քան Հրավերով սահմանված հատկանիշները և բավարարում են գնման ենթակա ապրանքի համար սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները: Բացի այդ, հաշվի

առնելով, որ պահանջվող գործիքի մոդելներն առհասարակ տարբեր են, հետևաբար դրանց տեխնիկական հատկանիշները կարող են որոշակի շեղումներ ունենալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

• 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 13-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

• 13-րդ հոդվածի՝ 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• Հրավերի թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով 4-րդ չափաբաժնով պահանջվել է՝ Տուբա «Բ»՝ չափը 4/4, փողի անցքի շառավիղը 14,2 մմ (,560”), փողալայնուկի շառավիղը 350 մմ (13,8”), երկարությունը 790 մմ (31,1”):

• «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն N 6.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկվել է՝ Տուբա «Բ»՝ փողի անցքի շառավիղը 16,8 մմ, փողալայնուկի շառավիղը 365 մմ, երկարությունը 840 մմ:

• Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից N 6.1 հավելվածով 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ առաջարկվող երաժշտական գործիքի չափերը չեն համապատասխանում Հրավերով նախատեսված տեխնիկական հատկանիշներին, ինչպես նաև նշված չէ գործիքի չափը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում սահմանվել է «չափը 4/4» հատկանիշը, սակայն տվյալ սահմանումից պարզ չէ, թե այն ինչին է վերաբերում, բացի այդ պարզ չէ նաև չափման միավորը, իսկ Ընկերության կողմից ներկայացված գործիքի չափերը բավարարում են գնման ենթակա ապրանքի համար սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2018թ. թիվ 03/26-3/10921-18 գրությամբ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ